ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 05 մայիսի 2017 թվական

Արձանագրություն N 4

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին)
կառավարման խորհրդի արտահերթ նիստի

Ներկա էին՝

խորհրդի նախագահ՝ Սուրեն Կարայանը,

խորհրդի անդամներ՝ Պավել Սաֆարյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը, Կարեն Սահակյանը, Կարեն Իսախանյանը, Աբգար Մկրտչյանը և Մարիամ Այվազյանը:

Մասնակցում էին՝

Լևոն Խալիկյանը, Արթուր Մկրտչյանը, Ալիս Երանոսյանը, Արարատ Սարգսյանը, Արմեն Տերտերյանը, Տարոն Հակոբյանը, Ռաֆիկ Բաղդասարյանը:

Քարտուղար՝ Արծրուն Նաջարյան:

Օրակարգում՝

1. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատում:

   Զեկուցող՝ Լևոն.Խալիկյան:

2. Տեսչական մարմնի 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտի նախագծի հաստատում:

   Զեկուցող՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետ Ռաֆիկ Բաղդասարյան:

Նախորդ նիստում տրված հանձնարարականներ՝

1. Ներկայացնել տեղեկատվություն նավթամթերքի շարժական լաբորատորիայի ընթացիկ վիճակի վերաբերյալ:
2. Ներկայացնել Տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի հեռահար (էլեկտրոնային) եղանակով իրականացման հնարավորությունը:

Զեկուցող՝ Լ.Խալիկյան:

Օրակարգի հարցեր՝

Օրակարգը հաստատվեց՝

Կողմ – 8

Դեմ - 0

Նախորդ նիստում տրված 1-ին հանձնարարականի կապակցությամբ

Լ.Խալիկյանը նշեց, որ նավթամթերքի շարժական լաբորատորիայի սարքը ենթարկվել է կալիբրովկայի (տրամաչափարկման), պատրաստ է և Հայաստանի Հանրապետությունում կլինի մոտ 10 օրից:

Նավթամթերքի շարժական լաբորատորիայի ընթացիկ վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը ընդունվեց ի գիտություն:

Նախորդ նիստում տրված 2-րդ հանձնարարականի կապակցությամբ

Լևոն Խալիկյանը նշեց, որ Տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի հեռահար (էլեկտրոնային) եղանակով իրականացման գործընթացը հնարավոր է և այն իրագործելի կլինի համապատասխան կարգ մշակելուց և հաստատելուց հետո: Հայկ Այվազյանը նշեց, որ խոսքը գնացել է հեռահար (էլեկտրոնային) եղանակով նիստի արձանագրության ստորագրման մասին:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ տեղի ունեցան մտքերի փոխանակություն, որի ընթացքում.

Հայկ Այվազյանը գրավոր ներկայացրեց իր առաջարկությունները, ինչը Սուրեն Կարայանը ուսումնասիրելով առաջարկեց հաստատել Տեսչական մարմնի 2017 թվականի գործունեության տարեկան ծրագիրը նախապայմանով, որ միջոցառումների ցանկում ներառվի միջազգային համագործակցության մաս: Առաջարկվեց դիտողությունները ներկայացնել Տեսչական մարմնին և տեղեկացնել խորհրդի մյուս անդամներին: Հայկ Այվազյանին առաջարկվեց (առկայության դեպքում) մեկամսյա ժամկետում ներկայացնել հստակ այլ միջոցառում, որը կքննարկվի Տեսչական մարմնի կառավարման խորհրդում:

Որոշվեց՝ Հաստատել Տեսչական մարմնի 2017 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Կողմ – 7:

Դեմ – 1:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ տեղի ունեցան մտքերի փոխանակություն, որի ընթացքում.

Խորհրդի անդամ Պավել Սաֆարյանը առաջարկեց հարցը օրակարգից հանել, քանի որ Տեսչական մարմնի պահպանման ծախսերը չեն համարվում 2018-2020թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագիր: Փոխարենը առաջարկեց կառավարման խորհրդին ներկայացնել (առկայության դեպքում) Տեսչական մարմնի գործունեությանը առնչվող այնպիսի ծրագիր, որի իրականացման համար անհրաժեշտ կլինեն լրացուցիչ ֆինանսական միջոցներ:

Որոշվեց՝ Տեսչական մարմնի 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտի նախագծի քննարկումը օրակարգից հանել:

Կողմ – 8:

Դեմ – 0:

Խորհրդի նախագահ՝ _____ **Սուրեն Կարայան**

Խորհրդի անդամներ՝

_____ **Պավել Սաֆարյան**

_____ **Կարեն Իսախանյան**

_____ **Հայկ Այվազյան**

_____ **Արմեն Գևորգյան**

_____ **Կարեն Սահակյան**

_____ **Աբգար Մկրտչյան**

_____ **Մարիամ Այվազյան**

Քարտուղար՝ _____ **Արծրուն Նաջարյան**